# «ALISO CANYON»-Ի ԳԱԶԻ ԱՐՏԱՀՈՍՔ

*Ներսի միջավայրի ստուգման մասին հաճախակի տրվող հարցեր (FAQ)*



**1. Ո՞վ է անցկացնում ներսի միջավայրի ստուգումը:**

Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջության բաժանմունքը (Հանրային առողջություն) և UCLA-ը համագործակցում են՝ Փորթեր Ռենչի որոշ տների ներսի օդի ու մակերեսների գնահատում անցկացնելու համար: Աշխատանքը վերահսկելու են բարձր պատրաստվածություն ունեցող արդյունաբերական հիգիենիստներ ու բնապահպանության առողջապահական անձնակազմի աշխատակիցներ: ԱՄՆ Բնապահպանության պաշտպանության գործակալության Ներսի օդի որակի ծրագիրը Հանրային առողջությանը տրամադրել է տեխնիկական աջակցություն՝ Փորթեր Ռենչում ներսի միջավայրի ստուգման այս ծրագիրը մշակելու համար:

**2. Ի՞նչ է ստուգելու Հանրային առողջությունը:**

Հանրային առողջությունը ստուգելու է լայն զանգվածի քիմիական նյութերի առկայությունը, ներառյալ՝ անկայուն օրգանական միացություններ (VOC-եր), մասնակի կայուն օրգանական միացություններ (SVOC-եր), մետաղներ և ծծմբային միացություններ: Հավաքվելու են երկու տեսակի ներսի միջավայրի նմուշներ՝ մակերեսի անձեռոցիկի նմուշ ու օդի նմուշ:

**3. Ինչու՞ է Հանրային առողջությունն անցկացնում այս ստուգումը:**

Փորթեր Ռենչի տարածքի որոշ բնակիչներ զեկուցում են ախտանիշներ, որոնք նման են «Aliso Canyon» գազի արտահոսքի ժամանակ առաջացող ախտանիշներին: Այս ախտանիշներից են՝ գլխացավ, սրտխառնոց, գլխապտույտներ, արյունահոսություն քթից, ինչպես նաև աչքերի, քթի ու մաշկի գրգռում: Հանրային առողջությունն անցկացրել է Հանրային առողջության արտակարգ արձագանքի համայնքային գնահատման (CASPER) հարցում՝ համայնքում առկա ընթացիկ առողջական խնդիրներն ուսումնասիրելու ու բնութագրելու համար: Գազի արտահոսքից 3 մղոն շառավիղով տարածքում հարցաքննված ընտանիքների 60%-ից ավել զեկուցել են, որ կենցաղում առնվազն մեկ անձ ախտանիշներ է ունեցել  գազի արտահոսքը փակելուն հաջորդող 30 օրվա ընթացքում: Շարունակվող ախտանիշների մասին այս զեկույցները երաշխավորում են ներսի միջավայրի լրացուցիչ հետազոտություններ:

**4. Որտե՞ղ է տեղի ունենալու ստուգումը:**

Ստուգումներն անցկացվելու են մոտ 100 տներում այնտեղ, որտեղ զեկուցվել է ախտանիշների ամենաբարձր ծավալն այն պահից, երբ 2016 թ. փետրվարի 18-ին հայտարարվել էր, որ հորը փակ է: Բնակիչներին կտեղեկացնեն, եթե իրենց տունն ընտրվել է այս հետազոտության համար: Ստուգումներ կացնկացվեն նաև մոտ 10 տներում գազի արտահոսքի տարածքից դուրս, և դրանք կծառայեն որպես վերահսկման խումբ:

**5. Ե՞րբ է տեղի ունենալու ստուգումը:**

Ներսի միջավայրի ստուգումն անցկացվելու է երկու փուլերով: 1-ին փուլը բաղկացած է մակերեսի անձեռոցիկի նմուշներից՝ սկսած մարտի 25-ից: 2-րդ փուլը ներառում է ներսի օդի նմուշներ՝ սկսած մարտի 29-ից:

**6. Ի՞նչ են «մակերեսի անձեռոցիկի նմուշները»:**

Մակերեսի անձեռոցիկի նմուշները կարող են որոշել, եթե առկա է փոշի (հայտնի է նաև որպես՝ նյութական մասնիկներ) կամ այլ նյութեր հատակին, պատուհանների կամ ներսի այլ մակերեսների վրա: Կանցկացվեն անձեռոցիկի նմուշների լաբորատոր անալիզներ՝ որոշելու համար այս նյութերի ֆիզիկական առանձնահատկություններն ու քիմիական բաղադրությունը:

**7. Ինչպե՞ս են գնահատվում հնարավոր առողջական ազդեցությունները:**

Հանրային առողջությունը կվերլուծի բոլոր ստուգված տներից ստացված արդյունքները: Եթե տներում չափված քիմիական նյութերը գերազանցում են սովորական ներսի մակարդակները, կամ այն մակարդակների վրա են, որոնք ավելի բարձր առողջական վտանգ են ներկայացնում, ապա Հանրային առողջությունը խորհուրդներ կտա բնակիչներին՝ համաձայն նահանգային ու դաշնային առողջապահական պաշտպանության միջոցների:

**8. Ի՞նչ են «անկայուն օրգանական միացությունները»:**

Շատ անկայուն օրգանական միացություններ (VOC-եր) մարդու կողմից ստեղծված քիմիական նյութեր են, որոնք օգտագործվում են և արտադրվում են ներկեր, հարակցանյութեր, նավթային, դեղագործական ու սառեցուցիչ նյութեր ստեղծելիս: Այս քիմիական նյութերը բնութագրվում են որպես անկայուն, որովհետև նրանք կարող են գոլորշիանալ կամ հեշտությամբ ընկնել օդի մեջ: VOC-երը սովորաբար հանդիպում են վառելանյութերում, լուծիչներում, հիդրավլիկ հեղուկներում, ներկերի նոսրացուցիչներում ու չոր մաքրման ագենտներում, որոնք սովորաբար օգտագործվում են քաղաքային միջավայրում: VOC-երի կողմից միջավայրի աղտոտումն առողջապահական մտահոգություն է առաջացնում, քանի որ դրանցից շատերը թունավոր են, և հայտնի կամ կասկածվող մարդկային քաղցկեղածիններ են:

**9. Ի՞նչ են ցույց տալու լաբորատոր անալիզների արդյունքները:**

Արդյունքները ցույց են տալու VOC-երի, SVOC-երի, մետաղների ու ծծմբային միացությունների մակարդակները, որոնք ներկա են ներսի մակերեսների վրա և ներսի օդում: Լաբորատոր անալիզները կհամեմատվեն առողջական վտանգ ներկայացնող մակարդակներին ու վերահսկման խմբի տներում առկա մակարդակներին, որոնք ընտրվել են, քանի որ հեռավորության պատճառով դրանք գազի արտահոսքի ազդեցությանը չեն ենթարկվել:

**10. Ե՞րբ են պատրաստ լինելու արդյունքները:**

Ներսի ստուգման համար պահանջվելու է մինչև 1-2 շաբաթ, որպեսզի կատարվեն լաբորատոր անալիզները: Հանրային առողջությունը տան տերերին կտրամադրի անալիզների արդյունքները ստուգումից հետո 3-4 շաբաթվա ընթացքում, ինչպես նաև ընդհանուր ամփոփիչ զեկույց կներկայացնի հանրության ուշադրությանը:

**11. Հավաքվելու են արդյո՞ք հողի նմուշներ:**

Ոչ, ստուգման այս ծրագիրը կենտրոնանում է ներսի միջավայրի վրա, քանի որ մարդիկ ախտանիշներ են զեկուցում իրենց տան ներսում գտնվելուց հետո: Քիմիական նյութերը կամ փոշին, որոնք կարող են գրգռում առաջացնել տան ներսում, ավելի արագ կցրվեն դրսում, հետևաբար, ամենայն հավանականությամբ, դրանք դրսում ախտանիշներ չեն առաջացնի: Հանրային առողջությունը շարունակում է ստուգել դրսի օդը՝ տարբեր աղտոտիչների մակարդակներին հետևելու համար:

**12. Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի պաշտպանեմ ինձ ու իմ ընտանիքը ներսի միջավայրի հնարավոր աղտոտումից:**

Տուն վերադառնալիս օդափոխեք ձեր տունը՝ բացելով բոլոր պատուհաններն ու դռները, միացնելով կենտրոնական հովհարման միավորները 2 կամ ավելի ժամով: Որոշ բնակիչներ համարում են, որ այս մեթոդը բավական է, որպեսզի ախտանիշները չկրկնվեն: Դուք պետք է նաև մտածեք ձեր տան օդի ֆիլտրները փոխելու մասին, ինչպես խորհուրդ է տալիս Կալիֆորնիայի Օդի ռեսուրսների խորհուրդը:

**13. Ի՞նչ անեմ, եթե յուղալի նստվածք եմ տեսնում իմ տանը:**

Խուսափեք նստվածքին դիպչելուց, քանի որ երկարատև կոնտակտը կարող է գրգռում առաջացնել: Զանգահարեք So Cal Gas՝ (818) 435-7707 հեռախոսահամարով, որպեսզի նրանք մարդիկ ուղարկեն այն գնահատելու ու մաքրելու համար, եթե անհրաժեշտ է: Կարող եք նաև զանգահարել Հանրային առողջություն՝ (213) 738-3220 հեռախոսահամարով ու զեկուցել յուղալի նստվածքի մասին:

**14. Ի՞նչ անեմ, եթե դեռ շարունակում եմ ախտանիշներ ունենալ:**

Եթե որևէ ախտանիշներ ունեք, կարևոր է դիմել ձեր սովորական բժշկական մատակարարին: Բժշկական մատակարարները խրախուսվում են դիմել Հանրային առողջություն, եթե հարցեր ունեն: Եթե ձեր ախտանիշները շարունակվում են տուն վերադառնալուց հետո, խնդրում ենք զեկուցել դրանք Հանրային առողջություն՝ (213) 738-3220 հեռախոսահամարով:

**Լրացուցիչ տեղեկությունների համար**

**Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջության բաժանմունք**՝ (213) 738-3220 կամ այցելեք www.publichealth.lacounty.gov/media/gasleak